ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/340

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Տերյանի, Կ. Ադամյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, տպագրական աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20551-2021 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.12.2021թ. թիվ 1/18-2/79103-2021 գրության հիման վրա, 14.12.2021թ.-ին «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.12.2021թ.-ին:

15.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/340 համարի ծածկագիրը:

22.12.2021թ.-ին, 30.12.2021թ.-ին և 13.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.01.2022թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 09.12.2021թ. թիվ 1/18-2/79103-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման համար 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով «Պետության կարիքների համար աշխատանքի կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ

2 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները: Սույն թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1/18-1/75072-2021 գրությամբ Կատարողին տրվել էր ապրանքատեսակների մատակարարման ողջամիտ ժամկետ՝ 7 օրացույցային օր, որից հետո «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն սույն թվականի դեկտեմբերի 3-ին մատակարարել է համապատասխան ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև մատակարարի կողմից մինչ այդ ներկայացված նմուշների օրինակներին:

Տեղեկացնում եմ, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Կատարողի կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 07-ից միակողմանի լուծում է 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.12.2021թ.-ին գրությամբ դիմել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20551-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 03.01.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար հիմք է հանդիսացել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի գրությունը և ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20551-2021 գրությունը, որով ՊԵԿ-ը հայտնել է, որ մեջբերում եմ՝ «ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման համար 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով «Պետության կարիքների համար աշխատանքի կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները: Սույն թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1/18-1/75072-2021 գրությամբ Կատարողին տրվել էր ապրանքատեսակների մատակարարման ողջամիտ ժամկետ՝ 7 օրացույցային օր (մինչև դեկտեմբերի 3-ը ներառյալ), որից հետո «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն սույն թվականի դեկտեմբերի 3-ին մատակարարել է համապատասխան ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև մատակարարի կողմից մինչ այդ ներկայացված նմուշների օրինակներին:

Նշեմ, որ Ընկերությունը ՊԵԿ-ին տրամադրել է գունավոր պատճենահանման մեքենայով տպագրված օրինակ, ոչ պոլիգրաֆիական, ինչպես որ նախօրոք քննարկումների ժամանակ պայմանավորվել էինք՝ դիզայնը և ձևը համաձայնեցնելու համար (ոչ գունային, որակական, կամ այլ հատկանիշների հաստատման, քանի, որ պատճենահանման մեքենայով և պոլիգրաֆիական մեքենայով իրականացված տպագրությունները չեն կարող միանման լինել):

*Տեղեկացնում եմ, որ տեխնիկական բնութագրով նմուշի հաստատում նախատեսված չէ, մեջբերում եմ տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ՝ «հանձնարարագիր իր կրկնօրինակով: Տպագրությունը՝ 4+1, համարակալումով՝ 3007301-3011300, համարակալման թվերը լինեն կարմիր գույնի, թղթի տեսակը՝ օֆսեթային, խտությունը՝ առնվազն 80 գ/մս, չափը՝ A4: Այլ պայմաններ. 'Աշխատանքի արդյունքը պետք է լինի չօգտագործված: ** Աշխատանքի արդյունքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Կատարողը: *** հանձնարարագրերի կրկնօրինակների գինը ներառված է*

*միավորի նախահաշվային գնում: **** Նմուշները կտրամադրվեն առձեռն, էլեկտրոնային տարբերակներ չեն տրամադրվելու:»:*

Նշեմ նաև, որ մատակարարվել է պայմանագրով նախատեսված ողջ քանակը 10 000 հատ իր կրկնօրինակով՝ 20 000 հատ հերթական համարակալում ունեցող, որի ընդհանուր գինը կազմում է 265100 ՀՀ դրամ՝ ՊԵԿ կողմից հաստատված և տրամադրված նմուշներին համապատասխան (ՊԵԿ կողմից հաստատված և մեզ տրամադրված նմուշները կցվում են՝ ՊԵԿ-ի կողմից մեզ տրամադրված նմուշները ֆայլ N1, մեր կողմից իրականացված տպագրությունը ֆայլ N 2):

Կից ներկայացված ՊԵԿ-ի հետ էլ. փոստի միջոցով կատարված գրագրությունները հաստատում են, որ մատակարարման ժամկետի խախտումը նաև Պատվիրատուի գործողությունների (նմուշների տրամադրման, կամ համաձայնեցման աշխատանքների) հետևանք է: Որպես հիմնավորում ներկայացնեմ, որ վերջնական նմուշի ձևը և դիզայնը ՊԵԿ-ի կողմից հաստատվել է 04.11.2021 թ.-ին (կցվում է ֆայլ N 3), չնայած որ մատակարարման վերջնաժամկետը պայմանագրով հաստատված էր 2021թ.-ի հոկտեմբերի 11-ը և ՊԵԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը՝ սահմանված ժամկետում չմատակարարման հիմքով:

Ի պատասխան ՀՀ ՊԵԿ-ի գրության հայտնում եմ, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ կողմից ՀՀՊԵԿ-ԷԱՃ- ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների խախտումը կապված է մեր աշխատակցի և ՀՀ ՊԵԿ գնումների պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների կողմից տպագրվելիք նյութի նմուշների մշակման և դրանց հաստատման (համաձայնեցման) հետ:

Տեղեկացնեմ, որ 4 տեսակի՝ իրենց ներդիրներով (8 տեսակ) նման քանակի տարբեր տպագրությունները և դրանց հերթական համարակալումը ժամանակատար պրոցես է (նախապատրաստական աշխատանքներ, տարբեր ֆորմաների հանում, 1-ին օրինակի տպագրում, ներդիրի տպագրում, այդ բոլորի հերթական համարակալում, որից հետո համարակալված 1-ին օրինակի և նույն համարակալում ունեցող դրա ներդիրի միասին դասավորում՝ կոմպլեկտավորում (պատահում է որ համարակալման ընթացքում հերթական համարը մեքենան վրիպում է, կամ հստակ չի տպագրում, դրանք նորից համարակալվում և տեղադրվում են) այդ ամբողջի մեկ առ մեկ ստուգում, դասավորում, փաթեթավորում, փաթեթների վրա անվանումների և համարակալումների նշում և այլն) և Ընկերությունը ամեն ինչ արել է հնարավորինս սեղմ ժամկետում տպագրական աշխատանքների մատակարարման համար:

Նմուշների վերջնական հաստատման (համաձայնեցման) ձգձգումը նաև ազդեց Ընկերության կողմից տպագրական աշխատանքների հերթական պլանավորման վրա, քանի որ Ընկերությունը այլ պայմանագրերի մասով նույնպես ժամկետային պարտավորություններ ունի ստանձնած և դրանք ժամանակի առումով միախառնվել էին:

Ավելացնեմ նաև, որ ՊԵԿ-ը նոյեմբերի 23-ի գրությամբ (կցվում է, ֆայլ N4), որը Ընկերությունը ստացել է «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով 26.12.2021թ.-ին (էլ. փոստի միջոցով ՊԵԿ-ը չի տեղեկացրել) 7-օրյա ժամկետ էր սահմանել մատակարարման համար և ժամկետը փոխադարձ համաձայնությամբ հաշվարկվել է ոչ թե 23.12.2021թ.-ից, այլ գրության ստացման օրվան հաջորդ օրվանից հաշված 7-րդ օրացուցային օրը, մինչև՝ 03.12.2021թ.-ը ներառյալ: Դրա համար հիմք է հանդիսացել ստացման ծրարի լուսապատճենը ՀՀ ՊԵԿ աշխատակցին WhatsApp համակարգի միջոցով ուղարկելը (կցվում է, ֆայլ N5): Տպագրական աշխատանքների մատակարարումը իրականացվել է փոխադարձ համաձայնությամբ նշված ժամկետում, իսկ ենթադրյալ թերությունների վերացման համար ՊԵԿ-ի կողմից Ընկերությանը ժամկետ չի տրամադրել, որը ՀՀ կառավարության «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 33. կետի 7-րդ ենթակետի պահանջ է, մեջբերում եմ՝ «...եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատուցված ծառայության, կատարված աշխատանքի կամ մատակարարված ապրանքի թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները», ինչպես նաև 26.08.2021 թ.-ի ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով «Պետության կարիքների համար աշխատանքի կատարման» պետական գնման պայմանագրի 2.1.2 կետի <<Եթե կատարվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհապույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը. >> պայման է:

Ինչպես հայտնի է տպագրական աշխատանքները դա արտադրանք է և չենք բացառում, որ ողջ ծավալի մեջ եղած լինեն մի փոքր քանակի վրա որոշակի վրիպակներ,

որը արտադրության մեջ պատահող երևույթ է և, որի վերացման համար 03.12.2021 թ.-ին ժամը մոտ 17-ի սահմաններում ՊԵԿ նյութատեխնիկական մատակարարման բաժնում տեղի ունեցած քննարկման ժամանակ (Ընկերության ներկայացուցիչներն են եղել Մուշեղ Տերյանը, Կամո Ադամյանը (դա հավաստվում է ՊԵԿ մուտքի և ելքի գրանցամատյանով) Ընկերությունը հայտնել է իր պատրաստակամությունը՝ ի հայտ եկող թերությունները վերացնելու, անհնարինության դեպքում նորը տպագրելու համար:

Տվյալ դեպքում ՊԵԿ-ի կողմից թերությունների վերացման ժամկետ Ընկերությանը չի տրամադրվել և ՊԵԿ-ը 07.12.2021 թ.-ին միակողմանի լուծում է պայմանագիրը և 20.12.2021 թ.-ին հայտարարում է նոր մրցույթ, որը 29.12.2021 թ.-ին հայտարարվում է չկայացած (կցվում է, ֆայլ N 6):

<<Հարդ ընդ Սոֆթ>> ՍՊԸ կողմից կատարվել է առավելագույնը (հիմնավորումների մի մասը, որը հնարավոր է եղել ներկայացնել ՊԵԿ-ի հետ գրագրության ձևով՝ կցված են, քննարկումները իրականացվել են նաև հեռախոսազանգերով, իսկ ՊԵԿ ֆիզիկապես գնալ-գալու պրոցեսը, հնարավոր կլինի հիմնավորել եթե Ձեր կողմից հարցում կատարվի ՊԵԿ՝ անցագրային բաժնից Մուշեղ Տերյանի և Կամո Ադամյանի անունով բացված անցագրերի մուտքերի և ելքերի քաղվածքները պահանջելով) նման պայմաններում ստանձնած պարտավորությունները ժամանակին և որակով կատարելուա համար:

Հայտնում եմ, որ 2019 թվականին ևս ՀՀ ՊԵԿ-ը նմանատիպ հիմնավորմամբ դիմել էր ՀՀ Ֆինանսների նախարարություն «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող Անձի 02.08.2019թ.-ի թիվ ՍՑ-ԼՕ-2019/109 որոշմամբ մերժվել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11052-2019 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը (որոշումը կցվում է, ֆայլ N 7):

Հաշվի առնելով, որ ՊԵԿ-ի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է ՀՀ կառավարության «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 33. կետի 7-րդ ենթակետի պահանջի խախտմամբ, ինչպես նաև 26.08.2021թ.-ի ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով

պայմանագրի 2.1.2 կետի ա) ենթակետի պահանջի պայմանի խախտմամբ, այն է. ՊԵԿ կողմից «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին

1. չի փրամադրվել պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող մատակարարված ապրանքի թերությունների վերացման ողջամիտ ժամկետ՝ եթե դրանք առկա են, ինչպես նաև.

2. չի ներկայացվել պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի կոնկրետ որ պահանջներին չի համապատասխանում մատակարարված ապրանքը,

3. չի նկարագրվել ու ներկայացվել առկա թերությունները և անհամապատասխանությունների վերաբերյալ հիմնավորումը,

4. չի նշվել թերություններ ունեցող մատակարարված ապրանքի քանակը, և

հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում՝ 03.12.2021թ. «Հարդ ընդ Սոֆթ>> ՍՊԸ կողմից ողջ ծավալով մատակարարվել է պայմանագրով նախատեսված տպագրական աշխատանքները (հավաստող փաստաթղթերը կցվում են, ֆայլ N 8) և որ 03.12.2021 թ.-ին ՀՀ ՊԵԿ նյութատեխնիկական մատակարարման ստորաբաժանման մոտ կայացած քննարկման ժամանակ Ընկերությունը հայտնել է իր պատրաստակամությունը թերություններ ի հայտ գալու դեպքում դրան վերացման համար և չի խուսափել պայմանագրային պարտավորությունների կատարումից»:

Վերոգրյալից ելնելով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2021թ. թիվ 26/26-1/20551-2021 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2021/340 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 26.08.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված աշխատանքի կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված աշխատանքի կատարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացույցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 07.12.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման համար 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով «Պետության կարիքների համար աշխատանքի կատարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները: Սույն թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1/18-1/75072-2021 գրությամբ Կատարողին տրվել էր ապրանքատեսակների մատակարարման ողջամիտ ժամկետ՝ 7 օրացույցային օր, որից հետո «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն սույն թվականի դեկտեմբերի 3-ին մատակարարել է համապատասխան ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև մատակարարի կողմից մինչ այդ ներկայացված նմուշների օրինակներին:

Միաժամանակ տեղեկացրել են, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար,

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 07-ից միակողմանի լուծել է 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20551-2021 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը

որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և N 2 հավելվածով սահմանված աշխատանքի կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի

մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ»*

ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև 26.08.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրով Մասնակիցը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը: Պայմանագրի հավելված 2-ով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացույցային օրվա ընթացքում:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 07.12.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի միջև ՀՀ ՊԵԿ կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման համար 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված թիվ ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով «Պետության կարիքների համար աշխատանքի կատարման» պետական գնման պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 11-ը կատարեր ստանձնած պարտավորությունները: Սույն թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1/18-1/75072-2021 գրությամբ Կատարողին տրվել էր ապրանքատեսակների մատակարարման ողջամիտ ժամկետ՝ 7 օրացույցային օր, որից հետո «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն սույն թվականի դեկտեմբերի 3-ին մատակարարել է համապատասխան ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչպես նաև մատակարարի կողմից մինչ այդ ներկայացված նմուշների օրինակներին:

Միաժամանակ տեղեկացրել են, որ Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել և խախտվել են Պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, Պայամանգրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն ստիպված է միակողմանի լուծել Պայմանագիրը:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 07-ից միակողմանի լուծել է 2021 թվականի օգոստոսի 26-ին կնքված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՇՁԲ-21/24-1 ծածկագրով պայմանագիրը:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով Պատվիրատուի և Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշումներն ու կողմերի միջև տեղի ունեցած գրագրությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Վերոնշյալ փաստերի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել Մասնակցի կողմից Պայմանագրի հավելված 1-ով և հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը, որն էլ, իր հերթին, կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ գործով ձեռք չի բերվել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից իրականացվել է Պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված՝ աշխատանքի հանձնման և ընդունման վերաբերյալ դրույթները:

Մասնավորապես՝ Պայմանագրի 3.3-րդ կետով սահմանվել է, որ եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2021թ.-ի թիվ 26/26-1/20551-2021 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/340 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**